---------- Forwarded message ---------
From: **Karine Karapetyan** <kkarapetyan223@gmail.com>
Date: Tue, Mar 10, 2026 at 12:48 PM
Subject: Շնորհակալության խոսքեր
To: info@ysmu.am <info@ysmu.am>

Բարև Ձեզ: Մենք Արցախից տեղափոխված բնակիչներ ենք:Ապրում ենք Վանաձորում: Որդիս՝Նվեր Արմենի Կարապետյանը ծանր վիճակում ընդունվել էր Վանաձորի ԲԿ՝ ենթաձնոտային շրջանի ֆլեգմոնա ախտորոշմամբ: 06.03 ին վիրահատեցին,սակայն երեխայի վիճակը շարունակում էր մնալ ծանր և Վանաձորի շտապօգնության ծառայության միջոցով տեղափոխվեց "Մուրացան" ՀՀ: Երեխային հետազոտելուց հետո ասացին որ նրա կյանքին վտանգ է սպառնում և կրկին վիրահատեցին ու տեղափոխեցին վերակենդանացման բաժանմունք:Որդուս վիրահատող բժիշկը Նարեկ Միերի Մկրտչյանն էր,որից անչափ շնորհակալ ենք և մեր խորին շնորհակալություն ենք հայտնում Մուրացանի ողջ անձնակազմին իրենց կատարած աշխատանքի համար: Իրենց շնորհիվ իմ որդին ապաքինվել է և շուտով կգնա տուն: Շնորհակալություն եմ հայտնում նաև մեր կողքին գտնվող բոլոր մարդկանց իրենց հոգատարության և աջակցության համար: